



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի և «Ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման» կարգի համաձայն գործակալությունը իրականացրել է 276 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, ինչպես նաև 222 գյուտի, օգտակար մոդելի արտոնագրերով վերապահված և 8

արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում:

2013թ. ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1574 ապրանքային նշանների վկայագրեր, 99 գյուտի արտոնագրեր, 31 օգտակար մոդելների արտոնագրեր և 32 արդյունաբերական նմուշների վկայագրեր: Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 508 փոփոխություն:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքները, ուշադրություն է դարձվել օրենսդրական պրակտիկայի ընդհանրացմանը և բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքներին, գլխավորապես՝ իրավական դաշտի կատարելագործմանը:

2013թ. ընթացքում շարունակվել են «Հեղինակային իրավունքի մասին»

Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքները, որն իրականացվել է Եվրամիության անկախ փորձագետի մասնակցությամբ, որը 2014 թ. կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը: Նոր օրենքի նախագիծը մշակվել է ՄՍՀԿ հանձնարարականների, ինչպես նաև TRIPS համաձայնագրի և Եվրամիության մի շարք դիրեկտիվների պահանջներին համապատասխան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության շրջանակներում Ստավոր սեփականության գործակալությունը շարունակում է համագործակցել միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա նմանատիպ կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում միջազգային համագործակցության շրջանակներում գործակալության մասնագետները մասնակցել են ՄՍՀԿ, ԵԱԱԳ կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին և որակավորման բարձրացման դասընթացներին:

2013թ. մարտի 14-15-ը Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ) Հեղինակների և կոմպոզիտորների կազմակերպությունների միջազգային կոնֆեդերացիայի (CISAC) հետ համատեղ կազմակերպեց և անցկացրեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը և իրավունքների կառավարումը» վերնագրով սեմինարը, որտեղ ելույթ ունեցան օտարերկրյա հյուրերը, «Հայհեղինակ» ՀԿ-ի աշխատակիցները և ՄՍ գործակալության մասնագետները:

Թվինինգ ծրագրի շրջանակներում

Երևան է ժամանել դանիական կողմի պատվիրակությունը՝ ծրագրի ղեկավար Քել Նյունանի գլխավորությամբ:

Թվինինգ ծրագրի շրջանակներում Հայաստան հրավիրվեցին եվրոպական փորձագետներ իրավակիրարկման գործող օրենսդրության վերլուծություն կատարելու համար: Համապատասխան փոփոխություններ ու առաջարկություններ ներկայացվեցին Քաղաքացիական, Քրեական և Քաղաքացիական դատավարության օրենսգրքերում:

2013թ. հունիսի 24-28-ը հեղինակային իրավունքի և ապրանքային նշանների մասնագետները մասնակցեցին վերապատրաստողների վերապատրաստման դասընթացներին:

Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր Յորգան Բլոմբլիստի և հեղինակային իրավունքի մասնագետ, պրոֆեսոր Դիոնիսիա Կալինիկուի կողմից մշակվել է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների վերաբերյալ մեթոդաբանական ձեռնարկ: Ձեռնարկը նախատեսված է ինստիտուտների, գրադարանների, ստեղծագործական միությունների և այլ շահագրգիռ կողմերի համար: